բեանց և Դպրոցբեանց ձիղին: Հակառակ իր վայելած համբաւին, նիւթական տառապագին կեանք մը կը բոլորէր սակայն անօթութնջ և տախպուած էր յաճախ զրաշարութեան ալ ընելու:— Կ. Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ ԳՈՐԾԱՏԱՆ մէջ շարուած գիրքեր կը տպագրուէին Է. ԹԻՒՆՕ ԵՒ ԸՆԿ. ԵԱՆ մամուլով: 1862ին Մանչէսթրաբնակ Հայեր երբ իրենց մատուռը կ'ունենան՝ իրենց առաջնորդ կ'ուզեն ունենալ զինք: Շահնազարեանց իր տպարանը կը փոխադրէ ՄԱՆՉԷՍԹՐ ուր առաջին գործը կ'ըլլայ Անգլիերէնը զարգացնել և **1864**ին կ'սկսի հրատարակել **Երկրագունդ** հանդէսը՝ 59 թիւ միայն:— Հիւանդանալով՝ նոյն տարին կ'անցնի Բարիզ, Եգիպտոս և Պոլիս՝ ուր կը կնքէ իր բազմարդիւն կեանքը 29 Օգոստ. 1865ին՝ շաքարախտէ: Թաղուած է Հասքէօյ:— Յետ մահու՝ անմոռաց օգտակարութիւն մըն ալ մատուցած է կրօնքի այս վեհ պաշտօնեան, իր աքսորեանց և զրկանաց պտուղ հարստութիւնը հրխտակած ըլլալով Ազգին՝ Նուպար Բաշայի միջոցաւ բարձրագոյն կրթարանի մը բացման համար: Բաշան 3000 եւս աւելցունելով անոր թողուցած 1000 ոսկիին վրայ, բանալ կու տայ «Առաքել-Նուպար Շահնազարեան Վարժարան»ը Հասքէօյ:— Թողած է պատմա-բանասիրական կարեւոր երկասիրութիւններ ձեռագիր, որոնցմէ **Քրիստոնէականը** միայն իր մահէն 4 տարի վերջ տպուեցաւ համանուն դպրոցին տպարանը:

207Գ. **Աբրահամ Մուրատեան**. — Բարիզի մէջ իր տպարանական գործունէութիւնը [1860] տե՛ս **207Ա**. թուահամար (Երուսաղէմ):

246. **Ա. Պուրտիէ**. — Կարդալ **Վիլեմ Թէլլէի** մասին գրուածքը: 1861ին իր տպարանէն լոյս ընծայուած է **Նոր Ընթերցարան**:

247. **Մօսիս եւ Արդի**. — Այս տպարանէն լոյս ընծայուած հայերէն գիրքերը եղած են սովորաբար Գուխասեան Լուսինեանի սեպհական հայ տառերով շարուած նոյն իշխանին գործերը, որոնցմէ յիշենք Պօղ և Վիրգինէ (1881), Նախնական Սերազան պատմութիւն (1896), Ֆրանսահայ երկխօսոր բառագիրք (1900) են.:

248. **Կիլինգիր տպագրութիւններ** են ի Բարիզ **Գաղափարը այդ է** (1891), **Բաղմաձայն իրաւունք մեր** (1892):

249. **Միջազգային Տպարան** (INTERNATIONALE)էն լոյս ընծայուած գիրքերն են Գիւղացիներու մէջ, Անիշխանութիւնը, Գիտութիւններու քայքայումը, Ֆէդ. հրատուններ (1893, Խօսք՝ նոր յեղափոխական: Յեղ. փոքրամասնութիւնները: Համայնք (5 թիւ միայն, 1894:

250. **Սոնեթ**. — 1897-1911՝ Ա. Չօպանեանի հրատարակած այս թերթը տպագրուած են. — ա. Vve Albouy, 75, Ալքինի տ'Իտալի: բ. A. Panvert, 7 և 9, Ֆօսէ Սէն Ժագ փողոց: գ. Ch. Noblet et Fils, 13 Գիւժա փողոց: դ. Տ. Տօղրամաճեան, 18, Կօպլէն փողոց: ե. Կ. Ներսէսեան, 328, Սէն Ժագ փողոց:— Ասոնցմէ Ճ. Նօպլէ է Ֆիզի մամուլով Ա. Չ. հրատարակած է «Անահիտ» Մատենադարանի թիւ 1-2 գործերը (Եպիկուրի պարտէզը, Աչքիւնար Վինէյի քերթուածները), Նահապետ Քուչակի դիւանը, Օմար Խայեամի Քառեակները (պարսկերէնէ թարգմանութիւն Գառնիկ Ֆնտքլեան):

251. **Պէյնչէ** 1900ին տպած է «Բաղդատական քերական. ծագումը և օգտումները»:

252. **Տպ. «Հանրաձայն»ի** (Օսլորան փողոց). — Բաց ի համանուն հանդէսէն՝ տպած է «Բարիզի համաշխ. ցուցահանդէսը» 1900, **Նաւագան** (Մ. Պարթեւեանի յախուռն քննադատութիւնը Ա. Չօպանեանի դէմ) 1901, **Դիւցազնօրէն** (Միամանօ) 1902:

253. **Տպ. Մինոյ** տպած է **Ոլիս** 1901, Ծրջաբերական (1902), Հայրենասիրութիւնը իբրեւ յանցագործութիւն (1903):

254. **Բանասիրական Տպ. Կ. Բասմաճեանի**. — Բաց ի նոյնին կողմէ հրատարակուած **Բանասէր** հանդէսէն, այս տպարանէն լոյս ընծայուած են. — Բնն. պատ-